

Ազգիս Վեհափառ Հայրապետը հետագայ վշտակցական եւ մխիթարական հեռագիրը ուղղեց Օգոստոսի փառ Կայսեր Ռուսաց Ալեքսանդր Գ. Ալեքսանդրովիչին յՅն Մարտի զկիսաւուրբ:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՌՈՐ ԿԱՅՍԵՐ

ԱԼԷԲՍԱՆԴՐ ԱԼԷԲՍԱՆԴՐՈՎՅԻ

Դառնակսկի՛՛ զոյժ մահուան անմահանալի ծնողի Ձերդ Կայսերական Մեծութեան համակեաց զիս ի մահճի տկարութեան եւ զեկեղեցի Հայոց ի խոր եւ ի հոգեկան տրտմութիւն եւ ի սուգ, թախծալի կսկիծն՝ որ քստ անհասանելի կամաց, Թագաւորին թագաւորաց եհաս Թագաւորիդ Ռուսաց, ներգործեաց եւ ներգործեսցէ անշուշտ եւ համօրէն հաւատարիմ՝ հպատակաց Ձերոց, ուստի ես խոնարհեալ յանդառնալի վճիռ Աստուածութեան՝ առաջի Սեղանոյ Իջման Միաձմի ի Մայր Աթոռս Արարատեան վերադառնալով զճերմեռանդն մաղթանա առ ամենաբարձրեալն Աստուած՝ զեղուլ ի Ձեզ զմխիթարութիւն Հոգւոյն Սրբոյ ի թեթեւութիւն բազմաթափի՛՛ վշտաց Ձերոց եւ սրոյ, լուսաւորեսցէ Տէր զհոգի ամենասիրելի Կայսեր հանգուցելոյ ի Տէր՝ արժանաւորելով կենացն յաւիտենականաց յարքայութեան երկնից:

ԳԼՈՐԳ Գ.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ազգիս Վեհ. Հայրապետը ամենայն Ռուսաց Օգոստոսի փառ Կայսեր Ալեքսանդր Գ. Ալեքսանդրովիչի գահակալութիւնը փութաց շնորհաւորել հետագայ հեռագրով յՅն Մարտի ընդ երեկս:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՌՈՐ ԿԱՅՍԵՐ

ԱԼԷԲՍԱՆԴՐ ԱԼԷԲՍԱՆԴՐՈՎՅԻ

Առյցեալ ամենահաւատարիմ զգացմամբ առ Գահն Ինքնակալ Թագաւորացն Ռուսաց, ընդ հովանեաւ որոց բարեբաղտ է եկեղեցի Հայաստանեայց, ես սրբազան պարտաւորութիւն անձին համարիմ պարզել առաջի Գահոյից Ձերդ Կայսերական Մեծութեան զսրտեռանդն շնորհաւորութիւն իմ ի բազմիւն Ձեր ի Գահ նախահարց Ձերոց, եւ աղաչել զԹագաւորն թագաւորաց, զի պահպանեսցէ զՁեզ ընդ հովանեաւ Աջոյն իւրոյ եւ փառաւորեսցէ բարեօր յիջանկութիւն եւ ի պատիւ լայնատարած Ռուսիոյ:

ԳԼՈՐԳ Գ.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Որոց ի պատասխանի հեռագրեցաւ հետեւեալը:

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ ԸՆԿԱԼԱՎ ԶԵՐԿՈՒՄ ՀԵՈՒԳԻՐԱ ՁԵՐՈՅԻՆ ՎԵՀԱՓԱՐԱՌՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԿԱԼԱ յՅ Մարտի եւ հաճեցաւ հրամայել

ինչ յայտնել Ձեզ զշնորհակալիս վասն համակրութեանն, զոր արտայայտեալ էիք առ Մեծ Թագ ԱՒՈՐՆ. և վասն ցաւակցութեանն, որ զիպեցաւ Ռուսիոյ, նաև վասն շնորհաւորութեան և ցանկութեանցն, զորս յայտնեալ էիք ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի դէպս ամբառնալոյ ՆՈՐԱ ի Գաշ նախահարց իւրոց:

ԳԻՐՍ.

* *

Ազգիս Սրբազնագոյն Կաթուղիկոսի տնօրէնութեամբ Ամսոյս 14-ին Ս. Էջմիածնի Տաճարի մէջ զկնի Ս. Պատարագի Ս. Էջմիածնի միաբանական Ուխտը Հայ ժողովրդականաց խումն բազմութեան ներկայութեամբ մաղթանք կատարեց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ Գ. ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՁԻ Ռուսաց Կայսեր Գահակալութեան համար, իսկ նորա հետեւեալ օրը (սոյն ամսոյ 15-ին) զկնի Ս. Պատարագի կատարեց Ռուսաց մեծ Կայսր հանգուցեալ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ թաղման առթիւ հոգեհանգիստ:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Փետրվարի 19-ին Մայր Աթոռում ըստ սովորականին վայելուչ հանդիսով տօնեցաւ Ս. Վարդանանց տօնը: Ս. պատարագից յետոյ միաբանական ուխտը հոգեհանգիստ կատարեց վասն հոգւոյ հանգուցեալ ծնողաց ԱԼՅ. Հայրապետի Ազգիս: Մայր Աթոռոյս միաբանական սեղանատանը ճաշի ժամանակ շնորհունակ եփրեմ Սարկաւազը կարգաց տօնին պատշաճաւոր մի ընտիր ճառ, որի մէջ գեղեցիկ կերպով նկարագրեց հինգերորդ դարու Հայոց մտաւոր շարժումը, Ս. Վարդանանց Ազգ. — կրօնական պատերազմի նպատակը և հետեանքը. աւելի գեղեցկապէս բացատրեց թէ՛ յառաջագէմ Գարեգնի անվնաս հաստակութիւնը ինչ ոգևորիչ ազդեցութիւն ունեցաւ նախարարական խմբի վերայ: Այս ճառին հետեւեց Մայր Աթոռոյս Ժառնգ. դպրոցի աշակերտաց ներդաշնակ ազգային երգեցողութիւնը, իսկ ճեմարանի Սաները թէ հացի ժամանակ և թէ երեկոյեան պատեցին Ս. Քաջերի յիշատակը իւրեանց բերանացի և գրաւոր ատենախօսութիւններով, ներդաշնակ երգեցողութիւններով և ազգային թատրոնական ներկայացումներով, որոնցից մինն էր իւրեանց հեղինակած գիւղական կեանքից կատակերգութիւն «Կորցրած դանակ», իսկ միւսը Պեշիկթաշի «Երեք քաջեր»: Որոց միշտ ներկայ էին լինում Գեոր. Տեսուչը և Յարգոյ ուսուցիչների խումբը: Սոցա խօսեցած ու կարգացած ճառերը հետզհետէ կհրատարակին Արարատի յառաջակայ տետրակներում:

* *

Ազգիս Ահհափառ Հայրապետը բարեհաճեցաւ Մայր Աթոռոյս վանքական — տնտեսական Կառավարութեան Անդամ Գեոր. Գրիգոր Եպիսկոպոս-